# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

*0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա, հեռ.(ֆաքս)՝ 011 90 00 02*

№ 18-408/գ -15

«02» 07. 2015 թ.

***«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցին***
***ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 59***

***Հարգելի՛ պարոն Սաքունց,***

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ուղարկում եմ Ձեր ղիմումի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում թիվ 62217915 քրեական գործը հարուցելու և վարույթ ընդունելու մասին որոշման պատճենը:*

*Առդիր՝ 2 թերթ:*

***Խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝*** ***Վ. Ավետիսյան***

*Հեռ.՝ 011-900-040, 094-426-425*

62217915
18-408 կգ-15

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին

2 հուլիսի, 2015թ. ք. Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանս, քննարկելով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի դիմումի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերը,

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված հաղորդումների, նյութերի և տեսաձայնագրությունների, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի դիմումի հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք են բերվել տեղեկություններ այն մասին, որ Երևանի Բաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնության կազմակերպած հավաքը (ցույցը), ապա նստացույցը դադարեցնելու նպատակով 2015թ. հունիսի 23-ին իրականացվող հատուկ միջոցառումների ընթացքում, ինչպես նաև հետագա օրերին, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձինք, դիտավորությամբ ակնհայտորեն դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից, Բաղրամյան պողոտայում, Ազատության հրապարակում, հարակից տարածքներում և ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում հավաքի մասնակիցների և իրադարձությունները լուսաբանող մի շարք լրագրողների նկատմամբ գործադրել են բռնություն, պատճառել մարմնական վնասվածքներ, դիտավորությամբ վնասել կամ ոչնչացրել վերջիններիս տեսաձայնագրող սարքերը, որով խոչընդոտել են լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին, հասարակության և պետության օրինական շահերին պատճառելով էական վնաս:

Նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերն առերևույթ պարունակում են պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից ենթադրաբար կատարված, ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ, 164-րդ հոդվածի 2-րդ և 185-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածի 2-րդ մասով, 175-176-րդ, 180-182-րդ, 187-րդ, 190-րդ և 192-րդ հոդվածներով՝

# ՈՐՈՇԵՑԻ

1. Բռնություն գործադրելով զուգորդված՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու, պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու, ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու՝ վերը նշված դեպքերի առթիվ հարուցել քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով, այն ընդունել վարույթ և ձեռնամուխ լինել նախաքննության կատարմանը:
2. Սույն որոշման պատճենն ուղարկել դատախազին:
3. Որոշման պատճենն ուղարկել «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցին:

**ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝** **Վ. Ավետիսյան**